

491.99 - 8
X - 62

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Յ. ԳԸԼԺՅԵԱՆ ԴՐԱՍԱՆ

Ա.ՐԱՄ Ա.ՆՑՈՆԵԱՆ.

ԴԱՅԼԱՅԼԻԿ

ԱՅԲԵՆԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ Ա. ՏԱՐԻ



Կ. ՊՈՂԻՄ
ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ
Օ. ԱՐՁՈՒՄՈՆ
1912.

04 MAY 2010

ԴԱՅԼԱՑԼԻԿ

ԱՅԲԵՆԱՐԱՆ

13 FEB 2013

7868

Ա 62
ՆՈՐ ՀՐԱՏԱՐՈՒԿՈՒԹԻՒՆ Յ. ԳԵՂԵԶԵԱՆ ԳՐԱՏԱՆ

110-012

428
249-ԱՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԻԱՆ

ՊԱՅԼԱՅՎԼԻԿ

ԱՅԲԵՆԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ Ա. ՏԱՐԻ

1002
1001



ՀՀ. Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ս. Հ. Պ. Հայաստանի Պահպանական Գրադարան
7/11-1922
* Ա. ԽԱՆԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏԱՆ Յ. ԳԵՂԵԶԵԱՆ
1912

ՅԱՌԱՋԱԲԱՆ



Քաջալեբուած մեր «Գանձարան»ներուն (*) գտած ջերմ ընդունելութենէն, մտածեցինք պատրաստել նաեւ անոնց Մանկապարտէղի Դասնթացքը, Ա, և Բ, տարի, այն միեւնոյն պարզ ու դիւրուսոյց մէթոսով, որ «Գանձարան»ներուն տարածման նպաստեց և մեծապէս գնահատուեցաւ մեր նախնակ ամէնէն դժուարահած ուսուցիչներէն»

Այս գրքին պատրաստութեան միջոցին ալ՝ մենք ամէն բանէ աւելի նկատի ունեցած ենք տարիքը այն տղոց՝ որոնց ուղղուած է: Մեր ժիգը եղած է խուսափիլ այն տեսակ նիւթերէ և ծանօթութիւններէ ու ոռնք ընտանի չեն տղոց, և մտքի տարապայման ու վնասակար յոգնութիւն մը կը պարտադրեն անոնց:


Ուսուցին ալ մեծագոյն մտահոգութիւնը այդ պէտք է ըլլայ: Տղան որ կը ներկայանայ իրեն, արդէն իսկ իր հետ բերած է նախնական ծանօթութեանց և ամէն տեսակ գիտելիքներու անկապ ու խառնակ կոյս մը: Ուսուցին աշխատութեան մելինակէտը պիտի ըլլայ օգտուիլ այդ ծանօթութիւններէն, կարգ ու կանոն դնել անոնցիք գոյացած քաօնին մէջ, մէթոտիկ դասաւորման մը ենթարկել զանոնք, լեզուի, էակներու և իրերու այդ անհաստատ ծանօթութիւնը ոչ միայն իբր հաստատուն ու հիմնական գիտելիք ամրացնել անոնց յիշողութեան մէջ, այլ նաեւ զայն ճոխացնել յարակից ծանօթութիւններով:

Եւ միշտ, ամէն բանէ առաջ պէտք է նկատի առնել այն իմացական կարելի ժիգը զոր տղաքը կրնան ընել այդ մտադ ու փափուկ տարեքին մէջ:

Կը յուսանք որ ներկայ դասագիրքը յարմար գործիք մը կը դառնայ ուսուցչին ձեռքին մէջ և զգալի չափով մը կը գիւրացնէ իր դըժուարին գործը:


Ա., Ա.

(*) Հրատարակուած են Տարրական (Բ. Տպագրութիւն), Միջին (Դ. Տպագրութիւն) և Բարձրագոյն դասըթացքները, ու կը զենուին Գրավանառ-Հրատակից Յ. Գրլիմեան հիմի իով, Կ. Պոխս, Զամեանձնլար, թիւ 26:




ԴԱՅԼԱՅԼԻԿ

ԱՅՐԵՆԱՐԱՆ




и и и ш ш ш
ч ч ч ч ч
н н з з н н


ии ии ии ии ии ии
чиши чиш пиши пиши



иширишириширири
чишишишишишишиши



чишишишишишишиши



Thərəz

համայնքի հու Բայզուն
պահեր պահապահի հու?


Təzəzəz

շու թու ուր շու շորո
ուր ուր ուր ուր ուր ուր



Yəzəzəz


փառարան թու օչ ըսր
ըսր օր աղբի օշ սկանց



Təzəzəz

մորերարան ժաման Յ

oh զրելոր պրմւ ելուն
քորք վկա սաղոր գարուն
ընունարքը բոյ կը զրիւն
թիրդորքը վկա նորէն




իլլիրի կասպուր է եւ սահման
չափու համար սպարուն ու ծառ
սպասուրի զրուն սրուն զրուն
քու կիւրի է կիւրի քաշունիւն






Ամրեցք այս քայլութ
կրորուն և ուրիշ




Տուրե տուրե աղոտք տուրե
աշուշանք ուղութ սէն
պրութք զբար ինչ կը պրութք




Հայութք պրութք
Այս աշճին է անյանք
սրունք է այծ կը սրունք
կուրե քուրե կը գրունք
ամին առուն կուր կուրունք





иши нүрүрүр
бэ бэ күр сүүр
күр иш рүрүнүр гү
күр иш үрийнүр гү
бүр үри нэ үир үнэ үрийн
түрүрүр нэ рүрүр үнэ үрийн
сүүрүр нэ сүүрүр
иши нүрүрүр
бүр зүй күр ишрүр





шнорке фоин шнуркү үйнүү
шнуркү үйрүүкү 3нүүчүү
шнуркү үйнүүкү шнуркү
ж үйнүүкү үйнүүкү шнуркү
нр шнуркү 4нк үйнүү
ж 5нк шнуркү






Үр үртэйр ши цөрүүри үзүү
Цөрүүрийн тэрэгийн үзүү
Нийр ши үзүүр нь үзүүрийн
Чийнтийн үзүүри
Ришигийн үр үзүүр
Чийнтийн үзүүр нь үзүүрийн




Эхэлжин
Эхэлжин
Чийн өмчийн
Ихрүүлийн өмчийн
Чийн тир өмчийн
Үр өмчийн
Ихрүүлийн
Чийн өмчийн



շար տրի կը շնո՞բ և
կրտք իւ ձաւաւրավը
մի կը շնոք ո կը նորդք
կորմա զավաշ կը շարդք
քայ շարունակ կը նոք
կորմա շարք
ձաւաւրավը



բժի առու
բրու կասրի
աշունորի
մի շողովի
կասրեցրը^ի
շար չուարժար կրամա
կը քաջան ո կը պարի
աշունուցրու մէ կասրի
ձաւորու վրա կամ ու
ի պարու կարի




ишиңр ғын үүрнү
үүрүнүүрр հանդաշ
үғи նүүрүүр үр ғыңт
ғүнүр ғүрүнүр үүрүүрү
հանդաшүүрр ուրբү հանү
քиүүрр րոյ ғриши пр
հանդաш






Յուր Գրիր ու կաղամար
Եյր Տանշորս Եյր Տամբը¹
Եյր Տամբը աւուշիկ
Բարք ովքր է յունիք
Հայտ Տամբը ու քողակ
Եր բարդաւ ու Եր Գրիրի
և կաղօրժ ու աւուշիչ
Երկար կամր ըստ Տամբը







Յիշ հաւայու ուրբու
 հաւ ու սիլու սիլ ու քաջ
 պրուրի սիրու շնովակնիք
 Յիշ հաւայու ըրմանիքնիք
 հաւոք Յիշ հաւոք կուրած
 սիլոք շայր գրիվու իւ



Յիշ հաւր ռուրիք զրաւուն էր
 ահա շնովակնիքը զրիք իւ
 կուրոք կոթուք ուրու կուրու
 շայր իւդու ու զրկայր. կորեան
 կրկն մուրբուրիք կու կուրած
 և կորիք կու կուրածուրիք



Կոր կոր կոր կոր կորկորակ
շուրջեցի թէ օդ է առաջ
հայր համբ թերուն առաջ
փափակներ կու ըստրամ
քրուներ սէ զորուրի
ծովուն զոր ու թերուն
թրուն օք շորօն ու պարագ
կը ժայռ ու կը պառակ



շոր աղուկ
աղուկ շորի կը զրմայր
քայ աղուր սէ քայր չէ
միշիր համու կը զրուտ
և համբը կը գողուս
կը զրայր կը ինուդ
աղուկ աղուր սէ ուշիք



и ф ѿ ѿ ѿ ѿ ѿ ѿ
и з ѿ ѿ ѿ ѿ ѿ ѿ
и ѿ и ѿ ѿ ѿ ѿ ѿ

и в т ѿ ѿ ѿ ѿ ѿ
и б л ѿ ѿ ѿ ѿ ѿ
и д ѿ ѿ ѿ ѿ ѿ ѿ
и ѿ ѿ ѿ ѿ ѿ ѿ ѿ

1 2 3 4 5 6 7 8 9 0

1 2 3 4 5 6 7 8 9 0

Ա Բ Գ

Կուշր Կուշրի Կուշրի
 Կուշրորի Կուշրոր
 Քորի Քորիս Քորի
 Քորիոր Քորորի
 Գործ Գործոր Գործի
 Գործունից Գործունորի

Ա Բ Գ

Արուսեակ բարի ու գործունեայ աղջիկ
 մըն է թըռչունները ազատ կը թողու և
 անոնց կեր կու տայ



Ք Զ Զ

Դրան Դրանուն Դրանուն
 Դրանունի Դրանունի
 Կրտ Կրտուն Կրտուն
 Կրտուն Կրտունունուն
 Հօր Հօրուն Հօրուն
 Հօրուն Հօրունունուն


Դ Ե Զ

Դըպլոց երթալը դասառուն սիրելը
 Դըպլոցին մէջ աշխատիլը մեզի պարտք է
 Երգ չունին չարերը
 Ամէն մարդ պէտք է աշխատի

Ց Ե Ր Յ Շ

Ց Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ
 Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ
 Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ
 Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ
 Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ
 Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ
 Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ
 Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ
 Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ
 Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ
 Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ Ե Ր Յ Շ

Ե Լ Թ Ժ Ի



Արուսեակ Աղաւնի և Արտաւազդ շատ
բարի ընկերներ են

Իրիկունը երբոր դըպրոցէն արձակուին
պարտէզ կերթան ու խելօքիկ կը խաղան

Արուսեակ Աղաւնի և Արտաւազդ բընաւ
կըսիւ չեն ըներ իրարու հետ և բարի
օրինակներ են թաղին տըղոց համար

Ամէն մարդ կը սիրէ զիրենք




L № 3 Y

Հին Հվուսակար Հվուսուր
 Հվուսակոյք Հվուսաշաշը^շ
 Խոչ Քրաշերսը Քրաշերը
 Քրաշերքի Քրաշերքը
 Ճոյ Ճոյսիր Ճոյսիրի
 Ճոյսին Ճոյսի Ճոյսուր
 Կաշար Կաշաշամիլ
 Կաշաշամարդ Կաշաշամար

I u o 4


Յովը

Յովը բարձիք Եվազիք օրէ է
 Պովքու Տէ կը բրամիք
 և միսի աշուուր կաթ կուրս
 Յովը կարգուու Եվազիքէ
 Յովքը չափ հոռը կը կուուիք




Հ 2 Դ

Հոյ հայտիւն հայտ
 հայութիւն հոյ հայութիւն
 հայտիւն հոյ կը բռնակի
 եղ եղամփր եղամփր
 եղամփր հոյու եղամփուր




Եղամփր եղ կը եղիւ



Ճ Ճաւոր Ճաւուրի
 Ճաշաւ Ճաւուրուրի
 Ճաւուր օվասկուր ճաւուրէ
 Շի Շիւոր Շիւուրի
 Շիւուր Շիւուրուրի


Հ 2 Դ



ԾԱՅՐԱԿ ԾԱՅՐՈՒ ԾԱՅԱԿԱՐ
ԾԱՅՐՈՒՇ ԾԱՅՐՈՒՆՈՒՅ
ՄԵՇ ՄԵՍՈՎ ՄԵՏՈՒՐԻ
ՄԱՅՐ ՄԱՅՐԻ ՄԱՅՐԻԿԱ
ՅՈՒ ՅՈՒՆՈՒ ՅՈՒՆԻԿ
ՅՈՒՆ ՅՈՒՆԻԿՈՒՐԻ
ՅԱՅ ՅԱՅԿ ՅԱՅԿԻԿՈՒՐԻ
ՅԱՅԿԵՐ ՅԱՅԿԱՐՈՒ ՅԱՅԿ




Յամից առաջաւոյ կերպ
շուրջամայր շուրջա
իւ ամայսից քամայրով
Յամից կը հայսի ամէն
ամայսիամայրով Տէ
չամից կայսիրով
զորքու շրայտին




А Н Д Е Й

Андр Симирини Амурлы
 Прял Пряшиныннине
 Энр Энрэ Эннерине



Энр уртасын күрүшүнүрдү
 күнгүй күнгүй күнгүй



Амурлы Амурлынчук
 Амурлынчук Амурлы
 Амурлынчук Амурлынчук
 Амурлынчук Амурлынчук

с п 2 4



ՇՈՒՆԸ

Շունը ամէնէն հաւատարիմ կենդանին
է Մեր տունը կը պահպանէ գողերուն
դէմ Ոչխարներուն վըրայ կը հըսկէ որպէս
զի գայլերը զանոնք չը տանին իր տէրը
կը ճանչնայ և անոր համար ինքզինքը կը
զոհէ Շունը շատ բարի է բայց կը
խածնէ չար տըղաքը երբոր զինքը տանջեն
Շատ շուներ իրենց կոյր տէրոջ առաջնորդ
կըլլան եւ զանոնք կը պահպանեն ամէն
փորձանքներու դէմ Լաւ շուն մը հարիւր
գէշ ընկեր կարժէ




Յ Ա Ր Ա

Տուր Երրուցի Երրական
 Երրիկոցի Երրուց Երրական
 Պուսք Պուսք Պուսք Պուսք
 Պուսք Պուսք Պուսք Պուսք
 Ասհեան Ասհեան Ասհեան
 Ասհեան Ասհեան Ասհեան
 Սայմուշ Սայմուշ Սայմուշ
 Սայմուշ Սայմուշ Սայմուշ

Զ Ո Ս Վ

Մ Ա Ր Ձ Ի

Մուր Մուր Մուր Մուր
 Մուր Մուր Մուր Մուր




Էջմիածին մեր մայր տաճարն է
 Ես վեց տարեկան եղայ այս տարի
 Տաճար շինողին տաճարաշէն կըսեն

Зиң зиңшүрү зиңшүр
зиңшүр зиңүрү зиңүрүнү




Зирбүрү шүрөп шүрөп борбүр
борбүрү шүрөп шүрөп зирбүр

s r 8 h



Дорбүр ғүм
зирбүр зиңшүрү борбүрү
шүрөп шүрөп шүрөп
борбүрү борбүрү шүрөп
шүрөп шүрөп ти борбүрүн



ԿՓՕՅ

Հրանք Հրանշառ Հրանմանք
 Հրանմաքը Հրանութիւն Հրանմանիւն
 Ֆայ Ֆարացիւն Ֆարակունք
 Ֆարակունք Ֆարայ Ֆարայք
 Գէշ պրատիւնք բայ կը նիսքիւնք
 Օվունք Օվունքաւ Օվունք
 Օվունքը Օվունքաւ Յ
 Հաւ պրատիւնք Կովագիւնք իրարունք

Փ Ք Օ Յ



Ահրանմանք պրատիւնք բանք
 Եր պարանք անզրենք շուր
 Ֆը կառունք հովանունք կը^ա
 կասքն դրաբունք

ա ե լ ը ի ո

- | | |
|----------|----------|
| ստորակէտ | երկար |
| միջակէտ | հարցանիշ |
| վերջակէտ | չակերտ |
| բութ | փակագիծ |
| շեշտ | տողադարձ |



Гыргызбэг чынбылар

Чырфык Чырпак,


Арлын ор төмөнкү шаштың
жоңи жоңи күрүшүнүн чынбылар.

Зындыктын шаптап ринчимбүйрүк
шашынан, жана жоңи жоңи күрүшүнүн
шаптапчынын күнүнүн чынбылар.

Зындыктын чынбылар.

Гыргызбэг





ԱՐՇԱԿԻՆ ՆԱՄԱԿԸ

Սիրելի Արտաւազդ,

Գիտե՞ս ինչու այս կիրակի չը կըրցայ պարտէզ գալ և ձեզի ճետ խաղալ։ Շիտակը կը խըպնիմ ըսելու, ծուլութիւն ըրած էի, դասերըս չէի պատրածատած, հայրիկըս բարկացաւ, և այս կիրակի զիս տունը պահեց։

Գէշ բան է ծուլութիւնը։ Ալ ուրիշ անգամ ծոյլ չը պիտի ըլլամ, պիտի աշխատիմ որ հայրիկըս զիս սիրէ ու չը պատժէ։ Իմ պատժուիլըս թող քեզի ալ խըրատ ըլլայ։

Բարեւներ քեզի և ընկերներուս։

Արշակ

Չրտուր սիրոք ըստի



Սիրոք մթամ. Տի
չրտուր սիրոք ըստի.
Կրասանով ու առով
Տարանի սիրոք ըստի
Չինք մոր սիրոք
է որ չրտուր ըստի և յո հայրերից
պաշտպանի բաշտիքին յի՞՛

Չրտուրից շօրանուցիւն մէ
Եր յուստիք և յուս շար կը սիրու։





1. ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՏԵՄՆԵ ԱՄԷՆ ԲԱՆ

— Ճակտիս վըրայ նկ գըրեր է որ
Մայրիկ, ես խելօք չի կեցայ այսօր:
— Աստուած :

— Բայց, Աստուած հոն չէր այն ատեն:
— Դուն զայն չես տեսներ, տըղաս, բայց
Դրախտէն
Գիշեր թէ ցերեկ, ամէն ժամանակ,
Անոր աչքն ամէն տեղ է, շարունակ:
Մեզի բընաւ չերեւար ան,
Բայց կը տեսնէ ինքն ամէն բան :

2. ԱՌՏՈՒՆ

Առտուն երբ մայրիկս կու գայ զիս արթընցընելու, շուտ մը վար կը ցատկեմ անկողնէն:

Բարի մայրիկս կը սիրէ մաքրութիւնը, ես ալ կը սիրեմ, և ամէնէն առաջ երեսս ու ձեռքերս կը լուամ:

Երբոր նախաճաշս ընեմ, գիրքերս կառնեմ և դասս կը սերտեմ:

Ահա տնտես եղբայրը եկաւ, դպրոց երթալու ժամը հասած է: Կը համբուրեմ մայրիկս և ուրախութեամբ կերթամ դպրոց :

Մեր վարժուհին ծոյլ տղաքը չի սիրեր: Ես աշխատասէր տղայ մըն եմ, խելօք կը կենամ, ուշազրութեամբ մտիկ կ'ընեմ վարժուհիին խօսքերը:

Եւ իրիկունը, հայրս ուրախ կըլլայ, Երբոր դասս լաւ սորված ըլլամ:

Ոչ ոք սիրէ ծոյլ տղան:

3. ՕՐԸ

Ամէն օր երկու մաս ունի, գիշեր և ցերեկ: Գիշերը մութ կըլլայ և լամբար կը վառենք լոյս ունենալու համար, իսկ ցերեկին՝ արեւը մեղ կը լուսաւորէ:

Արեւը առտուն կը ծագի և իրիկունը մարը կը մտնէ: Առտուն ծագած ատենը՝ արշալոյս կը կոչուի, և իրիկունը՝ մարը մտած ատենը՝ վերջալոյս:

Արեւը մեղի միայն լոյս չի տար, տաքութիւն ալ կու տայ:

Եթէ արեւը չըլլայ, ցուրտէն կը սառինք: Բոյսերն ալ առանց արեւի չեն կրնար ապրիլ:

4. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Ժամ, վայրկեան, երկվայրկեան:

Օր, շաբաթ, ամիս, տարի:

Մէկ օրը քսանըչորս ժամ է, մէկ ժամը վաթսուն վայրկեան, մէկ վայրկեանը վաթսուն երկվայրկեան:

Տարին տասերկու ամիս ունի, Յունուար, Փետրուար, Մարտ, Ապրիլ, Մայիս, Յունիս, Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր:

Ամիսը չորս եօթնեակ ունի, եօթնեակը եօթը օր, երկուշաբթի, Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի, Ուրբաթ, Շաբաթ, Կիրակի: Եօթնեակին սովորաբար շաբաթ կ'ըսենք:

5. ՊԶՏԻԿ ԿԱՏՈՒՆ

Չար տղաք պզտիկ կատու մը գտած էին
ճամբուն վրայ և զայն կը տանջէին :

Ալիս և Արշակ որոնք այն տեղէն կ'անցնէ-
ին, կատուն աղատեցին, շոյեցին և տուն տա-
րին :

Երբոր հալրերնին լսեց ասիկա, շատ ուրա-
խացաւ և գովեց զանոնք :

Աղրիք, տղաքս, ըսաւ, ամէն մարդ պէտք
է որ տկարները
պաշտպանէ, նոյն
խոկ եթէ անա-
սուն մը ըլլայ այդ
տկարը :

Հիմա պզտիկ
փեսիկը մեծցած
և խոշոր ու գե-
ղեցիկ կատու մը
դարձած է :

Ալիս շատ կը
սիրէ զայն, որով-
հետեւ չար մու-
կերուն թշնամին
է և զանոնք կը
հալածէ :

Ալիս իր ձեռքովը կը կերակըէ իր սիրելի
փիսիկը :



8. ԱՆՀՆԱՋԱՆԴԻԼ

ՄԵԼԻՆՔ կը խաղար սենեակին մէջ, երբ յանկարծ կրակարանին մօտեցաւ, ունելին առաւ և կը պատըաստուէր կրակին հետ խաղալու:

— ՄԵԼԻՆՔ, ըստւ, մեծ մայրիկը, ուրիշն դրամովը ողորմութիւն ընելը աղէկ չէ. եթէ կուզես այս աղքատին օգնել, նայէ որ քուկդեղած բան մը տաս անոր:

Մարիամ կարկանդակ մը ունէր սակառին մէջ. հանեց և աղքատին տուաւ:

— Ահա ատ է բուն ողորմութիւնը, ըստւ մեծ մայրիկը. ան որ ողորմիլ կուզէ, պէտք է իր ունեցածը զոհէ:

7. ՀԱՅԸՆ

Հաց, հացթուխ, հացագործ, հացավաճառ: Հացը ցորենէն կը շինուի:

Հողագործը ցորենը կը ցանէ, հասած ցորենը ջաղացքին մէջ աղալով ալիւր կը շինեն, հացթուխը ալիւրէն խմոր կը շինէ, հացագործը խմորը կեփէ փուռին մէջ, և հացավաճառն ալ մեզի կը ծախէ եփուած հացը:

Հացը օգտակար սնունդ մըն է:

ՄԵԼԻՆՔ հեռացաւ կրակարանին քովէն:

Քիչ մը ետքը մայրը դուրս ելաւ սենեակէն: ՄԵԼԻՆՔ, մօրը պատուէրը մոռնալով, կրակարանին քով գնաց նորէն և սկսաւ կրակները խառնել ունելիով:

Յանկարծ կրակ մը ինկաւ շրջազգեստին վրայ: ՄԵԼԻՆՔ՝ տեմնելով որ շրջազգեստը կը վառի, կրակը բռնել ուզեց և ձեռքը այրեց:

ՄԵԼԻՆՔ շատ ցաւ քաշեց, և մինչև այսօր ձեռքին վրայ կը մնայ այրած տեղին նշանը: Եթէ մօրը հնազանդէր, հարկաւ այդ փորձանքը չպիտի գար գլխուն:

9. ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Տարին չորս եղանակ ունի, Գարուն, Ամառ, Աշուն, Զմեռ: Ամէն եղանակ երեք ամիս կը տեւէ:

Զմեռը ցուրտ կ'ըլլայ, ձիւնագնդակ կը խաղան և ձիւնէ մարդիկ կը շինեն։ Աղքատները, որոնք տաք հագուստներ և լաւ բնակարան չունին, շատ կը նեղուին ձմեռը։

Գարունը ծաղիկներու եղանակն է և պղտիկ տղաքը հաճոյքով կը պտտին դաշտերուն մէջ, ծաղիկներ կը



հաւաքեն, գեղեցիկ փունջեր կը շինեն և զանոնք կը նուիրեն իրենց ծնողքին։

Ամառը արձակուրդի և պտոյտներու եղանակն է։ Պտուդներն ալ ընդհանրապէս ամառը կը համնին։

Աշունն ալ հաճելի եղանակ մըն է։ Խաղողը, որ պտուղներուն ամէնէն ախորժելին է, աշնան կը համնի։ Բայց ծառերուն գեղեցիկ տերեւ-

ները կը թափին աշնան, ու ձմեռը շուտով կը համնի։

Գարնան ամիսներն են՝ Մարտ, Ապրիլ, Մայիս։

Ամառուան ամիսներն են՝ Յունիս, Յուլիս, Օգոստոս։

Աշնան ամիսներն են՝ Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր։

Ձմեռուան ամիսներն են՝ Դեկտեմբեր, Յունուար, Փետրուար։

10. ԿԿՈՒՆ

Կու, կու, կու, կու։

— Հայրիկ, ինչու իր ձայնով քեզ հաճելի չէ կը կուն։

Անոր ձայնն ինձ կը թուի բաւական քաղցր ու սիրուն,

եւ, չեմ գիտեր, գանգատի դուն ինչ պատճառ կ'ունենաս։

— Թէ զայն ինչու չեմ սիրեր, պատճառն ըսեմ քեզ, տրղաս։

Անոր ձայնէն անհանգիստ կ'ըլլամ, ձանձրոյթ կ'զգամ շատ,

Որովհետեւ ան իր վրայ կը խօսի միշտ, անընդհատ։

11. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Դուռ , դոնակ , դոնապան , դոնապահ :
Ամէն տուն և ամէն սենեակ դուռ մը ունիք
Դուռը ծխնիներու միջոցաւ կը դառնայ և
կղպանք ունի : Կղպանքը կը բանանք կամ կը
դոցենք բանալիով :

Երբ դուռը պղտիկ է , դոնակ կըսենք :

Տան դուռը պահպանողը դոնապան կամ
դոնապահ կը կոչուի :

Դուռին փայտէ մասերը ատաղձագործը կը
շնէ , իսկ երկաթէ մասերը երկաթագործը :

12. ԱՐԵՒԻԾ


Արեւը շատ օգտակար է մեզի . անոր շնոր-
հիւ թէ լոյս կ'ունենանք և թէ տաքութիւն :

Բայց երբ արեւը խիստ է պէտք չէ որ ա-
նոր տակ պտտինք :

Պէտք է զով տեղեր նստինք , կամ տունը
մնանք , մինչև որ արեւին խստութիւնը անցնի :

Ամառները մանաւանդ ամէնէն աւելի զգոյշ
ըլլալու է :

Ամառ ատեն , արեւը ցերեկուան մօտ շատ
խիստ կ'ըլլայ :
Երբոր պարտէզ չունենանք , և կամ պար-



տէզին մէջ զով տեղ մը չըլլայ , տունին մէջ կը հաւաքուինք մեր ընկերներուն հետ , կը խաղանք կամ կը կարդանք :

Արեւին տակ քրտնելէ վերջ ջուր խմելը շատ մասսակար է :

13. Կ Ա Թ Բ

Կաթը մեղի համար շատ օգտակար սնունդ մըն է :

Կովը և այծը կաթ կու տան մեղի :

Կաթը ճերմակ է և անուշ համ մը ունի :

Կաթը թանձը մաս մը ունի որ իր սերն է ,
այդ սերով կարագ կը շինենք :

Կաթով պամիր և մածուն ալ կը շինուի :

Մայրիկը կաթնապուր ալ կեփէ կաթով :

Կաթ ծախողին կաթնավաճառ կ'ըսենք :

Այն կենդանիները որոնք մեղի կաթ կու
տան , կաթնտու կը կոչուին :

14. Գ Ն Դ Ա Կ

Տիրան մօրաքրոջը հիւր գացած էր , և սեն-
եակին մէջ մինակ մնացած ըլլալով , գնդակին
հետ կը խաղար :

Բայց Տիրան անզգոյշ տղայ մըն էր և չէր
նայեր թէ գնդակը ուր կը նետէ :

Յանկարծ գնդակը գնաց մեծ հայելիին դպաւ ,

և հայելին կտոր կտոր եղաւ :

Տիրան՝ վախէն թողուց վախաւ :

Բայց վերջը զղաց ըրածին վրայ , եկաւ մօ-
րաքրոջը քով և լալով ըրածը պատմեց անոր :

Մօրաքրոյը , տեսնելով որ Տիրան անկեղծօ-
րէն զղացեր է , ներեց , ըսելով .

— Քու յանցանքդ աւելի պիտի ծանրանար
եթէ շխոստովանէիր : Այն որ ըրածը կը խոստո-
վանի , կէս մը դարմանած կըլլայ իր յանցանքը :

15. ԼՐԱԳԻՐԴ ՄԻ՛ ԿԱՐԴԱՐ

— Հայրիկ , ալ հերիք կարդաս լրագիր ,

Մեզի հետ խաղալ դուն չես վափաքիր :

— Զեմ կրնար , տըղաս , ժամանակ չունիմ :

— Քեզի հետ խաղալ կուզեմ ես , հայր իմ ,

Քեզի հետ , ատկէ շատ հաճոյք կըզգամ :

— Եկուր , լըրագիրս կարդա մէկ անգամ :

— Ո՞հ , ոչ . այդ բանն ինձ ձանձրոյթ կու

տայ շատ :

— Կը տեսնես , տըղաս , դուն և ես , զատ զատ

Ունինք, իրարմէ տարրեր, խաղալիկներ, հա-
ճոյքներ :

Մարդ պէտք է որ ինքն իրմով ըզբաղի,
Նեղել ուրիշներն է միշտ անտեղի :

16. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Զարդ, զարդարանք, զարդարել, զարդար-
ուած, զարդարուն, զարդասէր, զարդասեղ :

Աստուած երկիրը զարդարած է ծաղիկ-
ներով :


Մենք ալ մեր տուները կը զարդարենք զա-
նազան զարդարանքներով :

Զարդարուած սենեակ մը միշտ հաճելի
տեսք ունի :

Զարդը սիրողը զարդասէր կը կոչուի :

Անպատճառ հարուստ ըլլալու պէտք չկայ
զարդարուն տուն մը ունենալու համար : Շատ
անգամ ծաղիկ մը կը բաւէ զարդարանքի համար :

Հայրիկս այս կիրակի ինձի սիրուն զարդա-
սեղ մը բերաւ :



17. ԱՅԾԻԿՆԵՐԸ

Գարունը եկաւ, այծերը ուրախ են : Ու-
րախ են նաև այծի ձագերը, մինինիկ ուկերը :
Ամէն կողմ կանանչ խոտեր ու ոստեր կան,
և այծերը շատ կը սիրեն խոտերը :

Իրենց բարակ ոտքերը ինչ ալ շուտ կը շար-
ժեն, երբոր վազեն, ոչ ոք կը հասնի իրենց ե-
տեւէն . քարերէն ու ժայռերէն վեր կը մազըլ-
ցին, կը ցատքուտեն, կը պոռան, երբեմն ալ,
չար տղաքներու պէս կը կզուըտին իրարու հետ,
կոտոշ կոտոշի կը զարնեն :

Մեր ուկիներն ալ կը կզուըտին, շատ խեռ
են, բայց դեռ իրենց կոտոշները չեն բուսած և
չեն կրնար իրարու ցաւ պատճառել :

18. ՈՐԿՐԱՄՈԼԸ

Զապէլ աշխատասէր ու բարի աղջիկ մըն է,
բայց որկրամոլ ալ է :

Առջի օր՝ մայրը կեռասի անուշ կեփէր :
Սանը դրած էր կրակարանին վրայ որպէս զի
կեռասը եփի :

Զապէլ՝ տեսնելով որ մայրը դուրս ելած է
խոհանոցէն, դգալ մը առաւ, սանին մէջ խո-
թեց, և վախնալով որ մայրը վրայ կը հասնի ու
կը տեսնէ, շուտ մը դգալը բերանը տարաւ :

Բայց կեռասը տաք էր և Զապէլին բերանը
այրեցաւ :

Զապէլ սկսաւ պոռալ : Մայրը վրայ հասաւ
և զայն յանդիմանեց, ըսելով .

— Աղջիկս, նայէ որ բնաւ թերութիւն չու-
նենաս . իրաւ է որ բարի և աշխատասէր ես,
բայց եթէ ուրիշ տասը յատկութիւն ալ ունե-
նաս, մէկ թերութիւն մը կը բաւէ այդ տասը
յատկութիւնն ալ ոչնչացնելու :

19. ՀԱՅՐԻԿԱՅ

Ամէն առտու կանուխ հայրիկս գործի կեր-
թայ և ամբողջ օրը կաշխատի մեզ ապրեցնելու
համար :

Հայրիկին աշխատութեամբն է որ մենք հաց
կուտենք, տաք հագուստներ կը հագնինք ձը-
մեռները, պտուղներ կունենանք սեղանին վրայ
և դպրոց կու գանք աղուոր բաներ սորվելու :

Ես շատ կը սիրեմ հայրիկս :

Երբոր մեծնամ, ես ալ անոր պէս պիտի աշ-
խատիմ:

Եւ երբ ծերանայ ու չկարենալ աշխատիլ,
ես ալ զինքը պիտի ապրեցնեմ իմ աշխատու-
թեամբս :

Մենք ամէնքս ալ մեր հայրիկին երախտա-
պարտ ենք, պէտք է որ հատուցանենք մեզի
ըրած բարիքը :

20. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Դաս, դասարան, դասատու, դաստիարակ,
դասապահ, դասագիրք :

Երբոր դպրոց երթամ, դասարանին կամ
դասապահին մէջ կը նստիմ:

22. Հ Ա Յ Ե Լ Ի Ն

Դաստիարակը մեղի դաս կու տայ և դասա-
տու ալ կը կոչուի :
Դասատու դաս տուող ըսել է :
Դասս կը սորվիմ դասագիրքին վրայէն ,
Այս «Դայլայլիկ»ը իմ դասագիրքս է :
Դասին ատեն միշտ խելօք կը կենամ , ու-
շադրութեամբ մտիկ կընեմ դասատուիս խոս-
քերը , և մաքուր կը պահեմ դասագիրքս :
Իրիկունն ալ , երբ տուն կը դառնամ , դասս
կը սերտեմ :
Այն որ իր դասերը ուշագրութեամբ չի սոր-
վիր , վերջէն դժբախտ կըլլայ :

21. Ծ Ա Ղ Բ Ա Ն Ք

Զարուհի կը ծաղրէր իր ընկերուհին՝ Արաք-
սին՝ որ քիչ մը կաղ էր :
Վարժուհին կը սաստէր Զարուհին , ըսելով
որ ամէնէն գէշ բանն է ուրիշներու տգեղու-
թիւնը կամ խեղութիւնը ծաղրելը :
Բայց Զարուհի մտիկ չէր ըներ :
Օր մը , մինչդեռ կը վազէր դաշտին մէջ ,
Զարուհի ինսկաւ և ոտքը կոտրեց :
Մնկէ ի վեր Զարուհի կաղ է : Բայց Արաքսի
չի ծաղրեր զինքը :

Փոքր իմման , որ շատ հաւածած էր ինքն իր դէմքին ,
Հայելիին մէջ կը նայէր ըզմալագին . . .
Մայրն՝ —«Հայելին դիր տեղն» ըսաւ : Աղջիկն
յամառ
Պատասխանեց . — «Կուզեմ տեսնել դէմքս ան-
պատճառ»,
Եւ ըսկըսաւ լալ , ոտքերը զարնել գետին :
— «Կուզես տեսնել , ըսաւ , երեսդ որ... կը փայլի .
«Նայէ հիմայ...»: — իմման տեսաւ , ցաւով սրտին ,
Կրքոտ , լալկան տըղու դէմք մը զարհուրելի . . . :

23. Զ Ո Ւ Բ Ը Ը

Շատ տղաք կը վախնան ջուրէն , բայց ես
չեմ վախնար :
Առտուն , երբ մայրիկս զիս ծորակին քով
կը կանչէ , ուրախութեամբ կը վազեմ կերթամ ,
որովհետեւ զիս պիտի լուայ :
Երբոր լուացուած ըլլամ , մաքուր կըլլամ և
ամէն մարդ զիս կը սիրէ :
Մեր վարժուհին ալ միայն մաքուր տղաքը

կը սիրէ, և կը յանդիմանէ անոնք որոնք չուաց-
ուած, գլուխնին շանտրուած դպրոց կու գան ։
Զուրբ իմ բարեկամս է։

24. ԼՈՅԱԼ

Լոյս, լուսաւոր, լուսաւորել, լուսափայլ,
լուսարար։

Լոյսը մարդուն համար շատ անհրաժեշտ է։

Ցերեկին, արեւին լոյսը մեզ կը լուսաւորէ,
բայց գիշերը լուսաւոր չէ, մութ է, և լոյս ու-
նենալու համար ճրագ կամ լամբար կը վառենք։

Տղաքը երբեք ճրագի կամ լամբարի հետ
չեն խաղար, որովհետեւ կրնան այրիլ կամ տու-
նը բռնկցնել։

Եկեղեցին լուսափայլ է. լուսարարն է որ
եկեղեցին մոմերը կը վառէ։



25. ԾԱՂԻԿՆԵՐԸ

Գարնան՝ ես կը սիրեմ ընկերներուս հետ
դաշտ երթալ և աղուոր ծաղիկներ քաղել։

Ծաղիկներով փունջեր կը կապեմ և մայրի-
կիս կը բերեմ որպէս զի սեղանը զարդարէ։

Մեր պարտէզն ալ լեցուն է ծաղիկներով։
Հայրս միշտ կը խնամէ զանոնք։

Մեր պարտէզին մէջ կան վարդեր, յասմիկ-
ներ, մանիշակներ, շահոգրամներ և ուրիշ ծա-
ղիկներ։

Երբ դեռ կոկոնի վիճակին մէջ է, պէտք չէ
փրցնել ծաղիկը։

Ծաղիկներով, մանաւանդ վարդով, անուշ
ալ կեփի։

Ծաղկեվաճառը ծաղիկ կը ծախէ։

26. ԱՄԱՌՈՒ ԵՒ ԶՄԵՌՈՒ

Ամառը բարակ հագուստ կը հագնինք, ձեռ-
մեռը հաստ :

Ամառը զովութիւն կը փնտռենք, ձմեռը
տաքութիւն :

Ամառը պատռհանները բաց կը թողունք,
ձմեռը դոց :

Ամառը արեւէն կը փախինք, ձմեռը՝ արևը
կը փնտռենք :

Ամառը պաղ ջուրէն կ'ախորժինք, ձմեռը
գաղջ ջուրէն :

Ամառը ցերեկը երկար և գիշերը կարճ է.
ձմեռը գիշերը երկար և ցերեկը կարճ :

Ամառը սառոյցի պէտք ունինք, ձմեռը սա-
ռոյցէն կը փախինք :



27. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Զիւն, ձիւնահատիկ, ձիւնագնդակ, ձիւն-
հալ, ձիւնաբեր, ձիւնածածկ, ձիւնագոյն, ձիւնել:

Զմեռը կը ձիւնէ, դաշտերը, փողոցներն ու
տանիքները ձիւնով կը ծածկուին, ձիւնածածկ
կ'ըլլան :

Զմեռուան հովերը ընդհանրապէս ձիւնա-
բեր են, ձիւն կը բերեն :

Զիւնի հատիկները փաթիլ կը կոչուին . մէ-
կիկ մէկիկ կիյնան և ինկած տեղերնին իրարու
միանալով ամէն բան կը ծածկեն :

Զմեռը ձիւնագնդակ խաղալով կը զրօննունք:
գնդակները շատ կարծր չենք շիներ որպէս զի
իրար չփիրաւորենք :

Զիւնը կը սառի, սառոյց կը դառնայ :
ձերմակ առարկաներուն ձիւնագոյն կը-
սենք, որովհետեւ ձիւնը ձերմակ է :

Գարնան՝ ձիւնհալը կը սկսի և ձիւները կը
հալին :



28. ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՇԻՆՔ ԱՄԷՆ ԲԱՆ

—Աստուած ծաղիկներն ի՞նչպէս շինեց, մայր,
Ո՞ւր գլտաւ գոյներն ամէնուն յարմար :
—Տեսաւ որ աշխարհք զարդարանք չունէր,
Ժպտեցաւ . իսկոյն բուսան ծաղիկներ :
—Զարմանք . ուրեմն ինչ որ կայ ըստեղծուած,
Ամէնքն ալ, մայրիկ, շինած է Աստուած...:
—Այն, ամէն բան, տըղաս, հողն և ջուր,
Կըրակն, օգն և լոյսն արեւին մաքուր :
—Հապա դժուն, մայր, քեզ ալ ստեղծեց ան...
—Զիս .
Անշնուշտ, բայց ի՞նչ կայ որ այդքան կ'ապշիս:
—Շինելու համար քեզ պէս պատուական
Մայր մ'արդեօք նրբան յոփնած է, որքան...:

29. ՄՐՋԻԻՆՆԵՐԸ

Ինչ աշխատասէր կենդանիներ են սա մըր-
ջիւնները :

Օրն ի բուն խումբերով կերթան կու գան
անընդհատ, և կեր կը կրեն իրենց բնակարան-
ները, որոնք գետնին տակը կը գտնուին :

Մրջիւնները միայն ամառը մշշտեղ կելեն,
և իրենց ձմեռուան ուտելիքը ժողվելով, ամբողջ
ձմեռը թաղուած կը մնան գետնին տակ :

Նայեցէք, ամէնքն ալ, նոյն իսկ պղտիկնե-
րը, կաշխատին :

Երբոր իրենցմէ մէկը ուտելիքի խոշոր կտոր
մը գտած ըլլայ և նեղութիւն կը զայն տանե-
լու համար, միւսները իսկոյն կը հասնին և անոր
կօգնեն որպէս զի չնեղուի :

Մրջիւնները լաւ օրինակներ են մեզի հա-
մար : Անոնք հեռատեսութիւն ունին, որովհետեւ
ամառուցնէ կը պատրաստեն իրենց ձմեռուան
կերը . անոնք աշխատասէր են, որովհետեւ աշ-
խատելու ժամանակը բնաւ պարապ չեն անցը-
ներ . յետոյ՝ միշտ իրարու կօգնեն, որպէս զի
իրենցմէ մէկը չնեղուի և աւելի հանգիստ ապրին:

ՅԱՐԻ ՏՂԱՔԸ

Սա տղաքը որ իշուկներով պտոյտի ելած
են, ամէնէն կը սիրուին :


Ինչու, զիտէք, որովհետեւ խելօքիկ կը խա-
ղան, իրարու գէշ խօսք չեն ըներ, իրենց վրան
զլուխը մաքուը կը պահեն, վտանգաւոր տեղեր
չեն երթար, և երբ իրենց ծնողքը կանչէ, շուտ
մը կը վազեն կերթան :

Անոնք կը սիրուին, որովհետեւ դպրոց եր-
թալու ատենը դպրոցէն ուշ չեն մնար, միայն
զբօսանքի ժամուն և արձակուրդի օրերը խա-
ղալով կանցընեն, միշտ կաշխատին որ դասեր-
նին սորվին, և տանը մէջ կօգնեն իրարու :

Անոնք վաղը միւս օր, երբ քիչ մը աւելի
մեծնան, իրենց ծնողքին ալ պիտի օգնեն, և
այն ատեն, ամէն մարդ ալ աւելի պիտի սիրէ
զանոնք :

Անոնք օրինակելի տղաքներ են. ամէնքդ
ալ անոնց պէս պէտք է ըլլաք :





31. ՄԱՆԿԻԿԸ ԵՒ ՃՆՃՂՈՒԿԸ

Մանկիկը կըսէր .—

«Աղունք ճնճղուկ , մւր կը թռչիս ,
Շուտ մի փախչիր , մի ձգեր զիս .
Տես , քուկին միւս ընկերներուդ՝
Հաւին , բաղին , ես կու տամ կուտ :
Նստէ խելօք , մօտըս եկուր
Վախկոտ մըլլար , մւր կ'երթաս , մւր»:

Ճնճղուկը ըստ .

«Եղբայր , ի՞նչպէս չըլլամ վախկոտ
Երք թշնամին նստեր է հոդ :
Արդեօք ինչու կը մոռնաս գուն
Թէ կը սպասէ քովըդ կատուն :
Եթէ բարիք ընել կ'ուզես ,
Նախ վորնտէ չարը մօտէս ,
Ետքը գիրկդ կրնամ գալ ես»:



32. ԹՐՋՆԻԿՆԵՐԸ

Ծառի մը վրայ թռչունի բոյն մը կար և բոյ-
նին մէջ ալ երկու թռչնիկներ կը գտնուէին :

Օր մը , մինչդեռ մայրերնին բացակայ էր ,
Թռչնիկները սկսան կոռւիլ իրարու հետ :

Անոնք լաւ մը իրար կտցեցին և այնքան
կոռւեցան որ երկուքն ալ բոյնէն վար իյնալով
մեռան :

Դուք ալ մի՛ կոռւիք ձեր եղբայրներուն ու
քոյրերուն հետ . անպատճառ փորձանք մը կու
գայ ձեր գլխուն :

33. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Փայտ , փայտաշէն , փայտահատ , փայտատ ,
փայտակոյտ , փայտակերտ , վառելափայտ :

Փայտը մարդոց համար ամէնէն անհրաժեշտ
առարկաներէն մէկն է :

Առանց փայտի ոչ տուն կրնանք շինել , ոչ

կարասի ,ոչ ալ ուրիշ շատ մը անհրաժեշտ առարկաներ :

Փայտը ծառերէն կելլէ : Փայտահատը կացինով կամ փայտատով կը կտրէ ծառերը ,որոնք շերտ շերտ կը սղոցուին և տախտակներու կը վերածուին :

Այն առարկաները որոնք փայտէ շինուած են , փայտակերտ կամ փայտաշէն կը կոչուին :

Իրարու վրայ գիզուած փայտերուն՝ փայտակոյտ անունը կուտանք : Զմեռը՝ վառարաններուն միջոցաւ վառուած փայտն ալ վառելափայտ կը կոչուի :

Ատաղձագործը , կահագործը , կառագործը , քանդակագործը փայտի վրայ կաշխատին :

Փայտէն կը շինեն նաւեր , նաւակներ , մակոյկներ : Ածուխն ալ՝ որուն այնքան պէտք ունինք կերակուր եփելու և տաքնալու համար , փայտէն կը շինուի :

34. ԱՇԽԵՆԻՆ ՊԱՏԻԺԸ

Աշխէն հացը չէր սիրեր , և ամէն անգամ որ մայրը հաց տար իրեն , կը մանրէր զայն և ատղին անդին կը նետէր :

Օր մը , սեղանին վրայ , մայրը հաց չտուաւ իրեն :

Աշխէն գոհ մնաց :

Յաջորդ օրը , մայրը դարձեալ հաց չտուաւ : Աշխէն նորէն գոհ մնաց :

Բայց երրորդ օրը , կերակուրները սկսան անհամ երեւալ իրեն :

—Մայրիկ , ըսաւ Աշխէն , ինծի կտոր մը հաց կու տամս :

—Աղջիկս , պատասխանեց մայրը , հացը շատ օգտակար ու յարգի բան մըն է , պէտք չէ զայն փճացնել . քու հացի բաժինդ տուի աղքատի մը որ անշուշտ քեզի պէս չպիտի փճացնէ զայն :

Աշխէն սակայն զղացած էր : Մայրը նորէն հաց տուաւ անոր :

35. ՎԱՐԴԻՆ ՓՈՒՇԵՐԸ

Վարդան որ քիչ մը առաջ պարտէզ ելած էր , կու լայ :

Եւ իրաւ ալ լալու պատճառ մը ունի :

Տեսէք , ձեռքերը արիւնոտեր են , կարծես կատուն ճանկոտեր է զանոնք :

—Ի՞նչ ունիս , ի՞նչ եղար , կը հարցնէ մայրը :

—Վարդ պիտի քաղէի , մայրիկ , բայց սուր բաներ կային վարդենիին վրայ և ձեռքս արիւնեցաւ :

—Քեզի միշտ կըսէի որ ինք իր գլխուդ ծա-

զիկ չքաղես, խօսքս մտիկ չըրիր և ահա պատժուեցար. դուն չէիր գիտեր թէ վարդենին փուշեր ունի, և այդպէս կը պատժէ այն անհնազանդ տղաքը, որոնք իրենց մօրը խօսքը - մտիկ չեն ըներ. եթէ խօսքս մտիկ ըրած ըլլայիր, հիմայ չպիտի լայիր այսպէս :

Այս արկածը լաւ խրատ մը եղաւ Վարդանին :

36. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Վարդ, վարդենի, վարդատունկ, վարդի իւղ, վարդագոյն :

Վարդը մեր պարտէզներուն զարդն է : Շատ տեսակ վարդեր կան, կարմիր, ճերմակ ու դեղին:

Առարկայ մը երբ վարդի գոյն ունենայ, վարդագոյն կը կոչուի :

Վարդը կը բուժնի վարդատունկին վրայ, որուն վարդենի ալ կըսենք :

Վարդէն աղուոր անուշահոտութիւններ կը շինուին. վարդէն կը շինուի նաև վարդի իւղ, որ շատ անուշ կը հոտի :

Վարդենին կարձ թուփ մըն է. ճիւղերուն վրայ սուլք փուշեր կը գտնուին. պէտք է միշտ զգուշութեամբ քաղել վարդը :

Վարդենին երբ շատ պզտիկ ըլլայ, թաղարներու մէջ ալ կրնայ պահուիլ ու ծաղիկ տալ: Վարդէն անուշ և վարդաջուր ալ կը շինուի:

37. ԱՂՏՈՏ ՎԱՐԴԸ

Պօղոս աղտոտ տղայ մըն էր :

Օր մը, ցեխին մէջ վարդ մը տեսաւ, վերցուց և հոտուըտաց :

Վարդը այնքան գէշ կը հոտէր որ Պօղոս՝ սրտնեղած՝ նետեց զայն :

— Ինչու վարդը նետեցիր, հարցուց հայրը որ իր քովէն կը քալէր և ամէն բան տեսած էր :

— Շատ գէշ կը հոտէր, հայր, անոր համար նետեցի :

— Տեսամբ, տղաս, վարդին պէս գեղեցիկ և անուշահոտ ծաղիկ մը անգամ, աղտեղութեան մէջ մնալով՝ այդքան անախորժ դարձեր է. դուն ալ այդպէս աղտոտ մնալով նետած վարդիդ կը նմանիս. ոչ ոք կուզէ քովդ մօտենալ:

38. ԵՂԲԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆ


Արշաւիր ու Արփինէ ,
Երկու սիրուն պատանի ,
Մէկը լուսին կը նմանի ,
Միւսը կըսես արփին է :

Ամէն առտու միասին ,
Կերթան դպրոց քովէ քով ,
Գիշերները լուռ բերնով
Ոյժ կու տան իրենց դասին :

Իրար այնքան կը սիրեն՝
Որ երբ կու լայ իր եղբայր ,
Սիրտը շրջի դառնաբար ,
Կու լայ նաեւ Արփինէն :

Քոյր ու եղբայր առանձին
Բան մը չեն ուտեր բնաւ ,
Նոյն խև շաքար կամ արմաւ ,
Փափաքէն ալ երբ խանձին

Ինչ որ ունին՝ հաւասար
Բաժին կընեն միշտ սիրով :
Կը մաղթեմ ձեզ հոգիով
Ըլլալ ասանկ քոյր եղբայր :



39. ԲԱՄԲԱՍԱՆՔ

Օննիկ գէշ սովորութիւն մը ունէր, շարունակ իր ընկերները կը բամբասէր : Իրեն համար՝ ընաւ լաւ ընկեր չկար . ամէնուն վրայ ալ մէյ մէկ պակասութիւն կը գտնէր : Եւ իր ընկերները չէին սիրեր զինքը :

Օր մը, պտոյտի պիտի երթային : Օննիկ ուզեց անոնց ընկերանալ . անոնք մերժեցին, բայց Օննիկ յամառեցաւ և չուզեց հեռանալ անոնց քովէն :

Միւսները, տեսնելով որ չերթար, հնարք մը մտածեցին . առաջարկեցին աչկապուկ խաղալ, կապեցին Օննիկի աչքերը, և մինչդեռ ան ասդին անդին դառնալով զիրենք կը փնտռէր, զինքը թողուցին այնտեղ և հեռացան գացին :

Օննիկ, բաւական դառնալէ վերջ, տեսնելով որ ձայն ձուն չելլեր, քակեց աչքին կապը :

Այն ատեն միայն տեսաւ որ ընկերները զինքը խաբած էին :

Օննիկ չկրցաւ գանգատիլ, որովհետեւ գիտէր որ գանոնք վշտացուցած էր . բայց միտքը դրաւ փոխել իր վարմունքը և նորէն անոնց սէրը շահիլ :

40. ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ

Բարսեղ նպարավաճառին գացած էր քսան փարայի ալիւր գնելու : Մայրը քառասուն փարանոց մը տուած էր իրեն, և Բարսեղ քսան փարա ետ պիտի առնէր :

Նպարավաճառը, զբաղած ըլլալով, քսան փարա տալու տեղ՝ վաթսուն փարա ետ տուաւ, կարծելով որ երկու զրուշնոց մըն էր առածը :

Բարսեղ ուրախութեամբ տուն վազեց և մօրը ցոյց տուաւ վաթսուն փարան, ըսելով որ նպարավաճառը խաբուած էր :

Բայց մայրը յանդիմանեց զայն :

— Տղաս, ըսաւ, քու ըրածդ անպարկեշտութիւն է նպարավաճառը սխալմամբ աւելի դրամ տուեր է քեզի, պէտք էր որ անմիջապէս ետ տայիր իրեն . դուն գոհ պիտի մնայի՞ր եթէ քեզ խաբած ըլլային . շնուտ, գնա ետ տուր քառասուն փարան :

41. ԱՆԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Փողոցներուն մէջ ձիեր, կառքեր և հանրակառքեր կը գտնուին :

Յակոբ միշտ կը մոռնար ասիկա և քալած
ատենը բնաւ ուշադրութիւն չէր ըներ :

Մէկ քանի անզամ քիչ մնաց որ կառքի մը
անիւներուն կամ ձիու մը տակ մնայ , բայց
նորէն խրատ չեղաւ :

Առջի օր սակայն , իր անզգուշութեան պա-
տիժը գտաւ :

Նորէն փողոցէն կանցնէր և կը վազվզէր
առանց չորս կողմընայելու , երբ ձի մը տապա-
լեց զինքը :

Յակոբ սկսաւ լալ , բայց բարեբախտաբար
մէկ տեղը չէր վնասուած , և միայն վախով ազա-
տեցաւ :

Հիմա Յակոբ շատ ուշադրութեամբ կը քալէ:
Եթէ առաջուց այդպէս ընէր , պարապ տեղը
վախ չպիտի քաշէր :

42. ՎԵՐԺՈՒԹԻՒՆ

Քար , քարահանք , քարակոյտ , քարակոփ ,
քարահատ , քարաշէն , քարուկիր , քարուտ :

Քարն ալ փայտին պէս անհրաժեշտ է մեր
տուներուն շինութեան համար :

Քարը քարահանքերէն կելէ . քարահատը կը
հանէ զայն : Քարակոփը քարերը կը յղկէ :

Երբ տուն մը քարէ շինուած ըլլայ , քարա-
շէն կամ քարուկիր կը կոչուի :

Լեռներ կան որոնք բոլորովին քարուտ են :
Քարի կոյտերը ժայռ ալ կը կոչուին :

Քարահատները վառօդով կը պայթեցնեն
քարակոյտերը : Քարի շատ տեսակներ կան .
կարծր քարերով ճամբաները կը սալարկեն :

Քարի տեսակ մը կայ որ մարմար կը կոչ-
ուի : Սովորաբար՝ արձաններ կը շինեն մարմարով :

Մարմարէ շինուած առարկաները մարմար-
եայ կը կոչուին :

43. ՇՈՒՇԱՆԻՆ ՇՐՋԱԶԳԵՍՏԸ

Շուշան շատ անհոգ և անուշադիր աղջիկ
մըն է , միշտ կը պատռէ հագուստները , կամ
կաղտուտէ զանոնք :

Դեռ նոր նոր մայրը լաւ շրջազգեստ մը շի-
նած էր անոր , բայց առաջին օրն իսկ Շուշան
զայն պատռեց :

Գիշերը, Շուշան յանկարծ արթնցաւ և զարմացաւ մնաց՝ սենեակը լուսաւորուած գտնելով։

Յետոյ տեսաւ որ մայրը նստեր և իր պատռած շըջազգեստը կը կարկտէ։

Շուշան հասկցաւ որ մայրը իր անփութութեան պատճառաւ անքուն մնացած է, կամացուկ մը իջաւ անկողնէն, գնաց մօրը վզին փարեցաւ և ըստ։

— Անուշիկ մայրիկս, ինձի համար անքուն մնացիր, բայց ասիկա վերջին անգամն է. ասկէ ետքը ուշադրութիւն պիտի ընեմ որ հագուստներս չպատռեմ։

Մայրը համբուրեց զայն և մոռցաւ անոր համար քաշած նեղութիւնը։

44. ՅԱՄԱՌՈՒԹԻՒՆ

Վարժուհին շարունակ կը սաստէր Սօֆին, որովհետեւ շշուկ կը հանէր և իր ընկերներուն աշխատութիւնը կարգիէր։

Բայց Սօֆի յամառ աղջիկ մըն էր, ականջ չէր կախեր վարժուհին յանդիմանութեանց։

Ահա դասի կարգը իրն է, բայց չի գիտեր, չէ կրցեր սորվիլ։

— Ինչու դասդ չես սորվեր, կը հարցնէ վարժուհին։

— Ուզեցի սորվիլ, բայց դժուար էր, մէկքանի անգամ փորձեցի ու չկրցայ։

— Աղջիկս, կըսէ վարժուհին, եթէ շշուկ հանելու մէջ ցոյց տուած յամառութիւնդ դասդ սորվելու համար գործածէիր, հիմա այսպէս ամօթահար չպիտի մնայիր ընկերներուդ քով. յամառութիւնը գէշ բան է՝ երբ գէշ բանի մը համար կը գործածուի. իսկ աշխատութեան մէջ յամառութիւնը ամէնէն լաւ յատկութիւնն է։

45. ՄԵՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Մեր ընկերները մեր եղբայրներն են, և մեր ընկերուհիները՝ մեր քոյրերը։

Մենք կը սիրենք զանոնք այնպէս, ինչպէս եղբայրներ և քոյրեր իրար կը սիրեն։

Միայն չար ընկերներն են որ չեն սիրուիր։
Մենք անոնցմէ հեռու կը փախչինք, ինչպէս որ

“Հխարը գայլէն կը փախչի : Այն որ գէշ ընկերոյն
հետ ժամանակ կանցընէ , ինք ալ գէշ կըլլայ :

Բայց երբ բարի են մեր ընկերները , մենք
շարունակ անոնց քովէն չենք հեռանար , միասին
կը խաղանք , մանաւանդ միասին կաշխատինք ,
որովհետեւ լաւ զիտենք թէ իրարու օգնելով ,
իրարու գործը զիւրացնելով՝ աւելի շուտ և ա-
ւելի շատ բան կը սորվինք :

46. ՈՐԲԵՐԸ

Լեւոն և Հայկուհի որբ են , հայր մայր շու-
նին :

Իրենց մօրաքոյրը կը խնամէ զիրենք , բայց
մօրաքոյրնին ալ հարուստ չէ , և երկուքն ալ
շատ բաներէ զրկուած են :

Մենք զանոնք աւելի կը սիրենք քան մեր
միւս ընկերները , որովհետեւ անոնցմէ աւելի
պէտք ունին մեր համակրութեան :

Շատ անգամ՝ մեր անուշեղէնէն կամ մեր
պտուղէն բաժին կը հանենք անոնց :

Անոնց երեսին չենք տար իրենց աղքատու-



թիւնը . կաշխատինք որ մոռնան մեր վայելած
բաներէն զրկուած ըլլալնին :

Լսոն և չայկուհի , մեր սէրը տեսնելով , շատ
բան կը մոռնան իրենց դժբախտութենէն :

Մեծ քոյրս կիրակի օրերը մեր պարտէզը կը
հրաւիրէ զանոնք , աղուոր բաներ կը կարդայ և
զանոնք կը զբօսցնէ :

47. Բ Ո Ւ Ն

Բու մը սոխակին կը գանգատէր .

— Սոխակ քուրիկ , չես գիտեր որչափ դըժ-
բախտ եմ :

— Բայց ինչու այդպէս դժբախտ ես :

— Շիտակը չեմ գիտեր , ոչ ոք կը սիրէ զիս.
Երբ տեղ մը թառ առնեմ , իսկոյն կաշխատին
զիս վանելու , պզտիկ տղաքն ալ քարեր կը նե-
տեն ինձի :

Այն ատեն՝ սոխակը ըստ :

— Կուզես գիտնալ թէ ինչու չես սիրուիր .
Քեզ չեն սիրեր , որովհետեւ դուն ալ ոչ ոք կը
սիրես . այն որ չի սիրեր , չի սիրուիր :

48. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Զուկ , ձկնորս , ձկնարան , ձկնկիթ , ձլկ-
նորսութիւն , ձկնիկ :

Զուկը ջուրին մէջ միայն կապրի , ծովե-
րուն , գետերուն և լիճերուն մէջ կը գտնուի :

Ձկնորսը ձուկը կորսայ ուռկանով կամ
կարթով :

Երբ ձուկը պզտիկ է , ձկնիկ կը կոչուի :

Ձկնկիթը , ձուկին հաւկիթը , շատ ախորժեկի-
համ ունի :

Ծովին եղերքը՝ ձկնորսները ձկնարաններ կը
շինեն ձկնորսութեան համար :

Զուկը ոսկոր չունի , փուշ ունի :

Զուկերով շատ համով կերակուրներ կեփէ
մեր մայրիկը :

49. ՊԱԿՍԱԾ ՀԱՅ

Մարգար և Ղազարոս շուկայէն հաց առած-
տուն կերթային : Զմեռուան մէջ էր և ձիւնը
ծածկած էր ամէն բան :

Ճամբան՝ Մարգար տեսաւ խումբ մը խեղճ

ու անօթի թոշնիկներ, որոնք ի զուր ձիւնին
վրայ ուտելիք կը փնտռէին :

Այն ատեն հացէն կտոր մը փրցուց, ման-
րեց և թոշուններուն նետեց : Թոշունները ու-
րախութեամբ ու ճշելով լափեցին հացի կը-
տորները:


— Ի՞նչ ըրիր, Մարգար, ըսաւ Ղազարոս, հի-
մա երբ տուն երթաս, հայրիկդ պիտի տեսնէ
որ հացէն կտոր մը պակսած է և քեզ պիտի
պատժէ :

— Հոգ մի՛ ըներ, ըսաւ Մարգար, երբոք
հայրիկս իմանայ թէ այդ պակսած հացը սա խեղճ
թոշնիկներուն տուի, ոչ միայն չպիտի պատժէ
զիս, այլ պիտի ուրախանայ :

Մարգար իրաւունք ունէր :



ՀՀ Ազգային գրադարան



NL0241523

ՀՅԱՅ

ԳՐԱՎԱՃԱՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՅՈՎԼԱՆՆԵՍ ԳԸԼԸՃԵԱՆ

Կ. Պոլիս, Զագմագնրյար թիւ 25

ԱՐԱՄ ԱՆՑՈՒՅՆՈՒՆ

1.	Գայլազլիկ Մանկապարտէզի Ա. Տարի	3
2.	Գայլազլիկ Մանկապարտէզի Բ. Տարի	4
3.	Գանձարան Տարրուկան Բ. Տպագրութիւն	5
4.	Գանձարան Միջին Գ. Տպագրութիւն	8
5.	Գանձարան Բարձրագոյն	12 ^{1/2}

Ա. ԱՆ ՊՈՒՏՀ

1.	Ծաղկեփունջ Մայքրենի Լեզուի Ա. Տարի	1
2.	Ծաղկեփունջ Մայքրենի Լեզուի Բ. Տարի	2 ^{1/2}

ԱՐԵԱԿՈՒՀԻ ԹԵՂԱԳԻՒՆ

1.	Արդի Բարյագիտութիւնը Միջին և Բարձրագոյն	8
2.	Արդի Բարյագիտութիւնը Բարձրագոյն և Լրացուցիչ	12 ^{1/2}

ՄԻՋՐԱՆ ՅՈՎՀԱՅԵԽԵՍՈՒՅՆ

1.	Քաղաքական Տնտեսութիւն	5
2.	Նոր Քերական Փրանսերէն Լեզուի Գ. Տպագրութիւն	11 ^{1/2}

ՄՈՒՇԵՎ, ՍՊԻՒՏ, ՍԵՐՈՎ, ԲԱՑՈՒՄ

1.	Քիստոնիչական Բարյագումնը	5
2.	Քիստոնիչական Եվրոպեայ Վարդապետութիւնը	5

Մամկանաժամկան ամենամիջին մերույլ պատրաստած այս դասագիրքներ ամերցիի են մինչեւ հիմա երաշտակուած նոյնանման երաշտակուած մէջ:

Մայուս և յիւնաման ապագրութիւն. Նոր և մասնաւոր շինուած պատիւններ. Տոկոն կազմ. Դիւմաւայէլի զիմ և զոհացուցիչ զիդ:

Գիմել՝ ուղղակի Գրատան հասցեին

درسعادة حفظيل نوسرو ۲۵ او حانس قيلجيان

Գրատուն Յ. Գլըճեան, Զագմագճըլար թիւ 25
Librairie H. Kilidjian, Rue Tchakmakdjilar 25

→ ԳԻՆ Յ ՂՐԸ. ←